

Արձանագրություն թիվ 5

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ

28 դեկտեմբերի 2016թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 15անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտի գործընթացի քննարկում. մուտքերի կատարողականով:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. Երկրորդ ընթացիկ ստուգումների, քննությունների և ստուգարքային շրջանի ամփոփում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ֆակուլտետի զարգացման 2017թ. Ռազմավարական ծրագրի քննարկում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստին նախատեսված է երեք հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2016-17ու. տարվա I կիսամյակում կատարված աշխատանքները կապված ուսումնական գործընթացի հետ և նշեց, որ ըստ ժամանակացույցի իրականացվել են բոլոր աշխատանքները, որոնք նախատեսված են եղել ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Ձեկուցողը հատուկ ընդգծեց, որ կիսամյակի ընթացքում դասաժամի բացթողում չի եղել, իսկ ուսանողների կողմից անհարգելի բացակայությունների պատկերը հետևյալն է՝ դեկանի կողմից նկատողության են արժանացել 10, տնօրենի կողմից խիստ նկատողության 4, իսկ 90ժ. և ավելի անհարգելի բացակայության 2 ուսանողներ կուրսից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա.Հ.Ասատրյանը, Մ.Հարությունյանը, Մ.Մելքումյանը, Մ.Ստեփանյանը, Ա.Չիբուխչյանը: Նրանք առաջարկեցին քննաշրջանի ընթացքում անհարգելի բացակայություն ունեցող ուսանողներին խիստ հետևել և ապահովել առավել օբյեկտիվ մոտեցումներ՝ հատկապես կիրառական արվեստ մասնագիտության երրորդ կուրսում:

Այնուհետև Ա.Ասատրյանը առաջարկեց <<Գծանկարչություն>>, <<Գունանկարչություն>>, <<Կոմպոզիցիա>> և <<Աշխատանք նյութի վրա>> առարկաների բոլոր մոդուլների քննությունները անցկացնել հանձնաժողովներով՝ ապահովելով առավելագույն օբյեկտիվություն և թափանցիկություն: Նա առաջարկեց հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկել դասավանդող դասախոսին, նույն մոդուլը մեկ այլ խմբի խմբին դասավանդող դասախոսին, ամբիոնի և դեկանատի ներկայացուցիչներին և մասնագիտության պատասխանատուին: Քննությունների հանձնաժողովների կազմում առաջարկվեց.

1. Ա.Շ.Մարգարյան- դեկանի ժ/պ, ֆ.մ.գ.թ, դոցենտ
2. Հ.Մ.Ասատրյան- ֆակուլտետի գեղարվեստական խորհրդի նախագահ, ՀՀ նկարիչների միության անդամ,
3. Ա.Լ.Չիբուխչյան –մասնագիտության պատասխանատու, ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
4. Ա.Ռ.Խաչատրյան- ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
5. Ք.Հ.Մխիթարյան - ՀՀ Դիզայներների միության անդամ, ասիստենտ

<<Կոմպոզիցիա>> և <<Աշխատանք նյութի վրա>> առարկաների հանձնաժողովի կազմը.

1. Ա.Շ.Մարգարյան- դեկանի ժ/պ, ֆ.մ.գ.թ, դոցենտ
2. Մ.Հարությունյան- „Դեկորատիվ - կիրառական արվեստի և դիզայնի” ամբիոն վարիչ, արվեստագիտության թեկնածու
3. Ռ.Պողոսյան- ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
4. Ս.Հովհաննիսյան- ՀՀ նկարիչների միության անդամ, ասիստենտ
5. Դ.Պողոսյան-դասախոս

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Մասնագիտական առարկաների բոլոր քննությունները անցկացնել հանձնաժողովներով:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2016-17 ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների, ստուգումների և ստուգարքային շրջանի առաջադիմությունը, որը կցվում է արձանագրության տեքստին:

Այնուհետև զեկուցողը ամբիոնների վարիչներին և դասավանդող դասախոսներին տվեց հանձնարարականներ քննություններին պատշաճ նախապատրաստվելու կապակցությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Մ.Ասատյանը, Մ.Ստեփանյանը, Ա.Զիբուխյանը: Նրանք համակարծիք էին զեկուցողի հետ և նշեցին, որ քննաշրջանի անցկացման համար իրականացվել են բոլոր անհրաժեշտ գործընթացները:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հանձնարարել ամբիոնների վարիչներին ժամանակին և բարձր մակարդակով իրականացնել քննաշրջանի կազմակերպման հետ կապված աշխատանքները:
2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին, դեկանատին և մասնագիտության պատասխանատուին՝ քննաշրջանի ընթացքում սահմանել վերահսկողություն:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ դեկանի ժ/պ Ա.Շ.Մարգարյանը և նշեց, որ Ֆակուլտետի 2017թ. զարգացման Ռազմավարական ծրագիրը բխում է մասնաճյուղի զարգացման 2017-2021թթ. Ռազմավարական ծրագրից: Այնտեղ մատնանշված են բոլոր այն նպատակներն ու նրանց հասնելու համար անհրաժեշտ խնդիրները, որոնք պետք է իրականացնել մասնաճյուղի և մասնավորապես Ֆակուլտետի առաքելությունը կատարելու համար: Այն գործընթացները, որոնք տարբեր պատճառներով չեն իրագործվել 2016 թվականին, հնարավորության դեպքում տեղափոխվում են 2017թվականի ծրագրի:

Զեկուցողը նշեց, որ առաջիկա տարում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերի արդյունավետ իրագործմանը, դասավանդման նորագույն մեթոդների կիրառմանը, ուսանողներին դասապրոցեսին առավելագույն չափով ընդգրկելու պրոցեսին, կարգապահության բարձրացմանը և այլ կարևոր հարցերին, որոնք նշված են ծրագրում:

Ֆակուլտետի 2017 թվականի զարգացման ծրագրի նախագիծը կցվում է արձանագրությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Մ. Հովհաննիսյանը և Հ.Ասատրյանը, որոնք իրենց հավանությունը տվեցին ծրագրի նախագծին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ֆակուլտետի 2017 թվականի զարգացման ռազմավարական ծրագիրը ներկայացնել ՄԿՈԱ բաժին՝ ստուգելու համապատասխանությունը մասնաճյուղի 2017-2021թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հետ, որից հետո ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհուրդ՝ հաստատելու այն:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ք.Հ.Մխիթարյան